ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Հ. ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրզոյան.

Ի պատասխան Ձեր 27.02.2020թ. հ.02/045 գրության՝ տեղեկացվում է, որ համաձայն «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի կանոնավոր փոխադրումներ իրականացնող փոխադրողը պարտավոր է ապահովել ավտոտրանսպորտային միջոցների երթևեկության անվտանգությունն ապահովող ագրեգատների ու հանգույցների տեխնիկական և ավտովարորդների առողջական վիճակի ամենօրյա զննումը:

Երևանի ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիներ սպասարկող կազմակերպությունների (այսուհետ՝ Փոխադրող) և «Երևանտրանս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերության) միջև կնքվող՝ երթուղու սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն, փոխադրողը պարտավոր է սեփականության կամ օգտագործման իրավունքով իրեն պատկանող հավաքակայանում կազմակերպել ավտոբուսների տեխնիկական և վարորդի առողջական վիճակի ամենօրյա նախաուղերթային զննման անցկացումը և ապահովել դրանց վերաբերյալ համապատասխան նշումները ճանապարհային թերթիկում (դրոշմակնիքի միջոցով):

Ընկերությունն իրավունք ունի արգելել Փոխադրողի կողմից ներկայացված ավտոբուսի շահագործումը, եթե ճանապարհային թերթիկում բացակայում են ավտոբուսի տեխնիկական և վարորդի առողջական վիճակի նախաուղերթային զննման վերաբերյալ համապատասխան նշումները, արձանագրվել է կամ ակնհայտ է վարորդի առողջական վիճակի անբավարարությունը կամ անսթափ վիճակը՝ այդ մասին ճանապարհային թերթիկում կատարելով համապատասխան նշումներ:

Երթուղիների սպասարկման աշխատանքների նկատմամբ հսկողությունն իրականացվում է ինչպես Ընկերության երթկարգավարական ծառայության, այնպես էլ գծային հսկողության բաժնի

աշխատակիցների միջոցով, որոնք պարբերաբար ստուգայցեր են իրականացնում երթուղիներում և Փոխադրողի կողմից պայմանագրային պարտականություններում թերանալու կամ դրանք չկատարելու պարագայում կազմվում են արձանագրություններ և կիրառում պատասխանատվության միջոցներ՝ այդ թվում տուգանքի տեսքով, որոնք նախատեսված են պայմանագրով:

Միաժամանակ, վարորդների, երթուղիների սպասարկման աշխատանքների, երթուղիները սպասարկող կազմակերպությունների գործունեության և դրանց կողմից ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ, իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, վերահսկողություն են իրականացնում տեսչական մարմինները, ինչպես նաև ՀՀ ոստիկանությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ